



Ո՞Վ Է ՄԵՐ ՊԱՏՄԱՐԱՅԻՐԸ

Հինգերորդ դարու նշանաւոր հայ պատմիչը՝ Մովսէս Խորենացին, կոչուած է Պատմահայր կամ Քերթողահայր: Ան ծնած է Տարսնի Խորոնք գիւղը: Ուսում ստանալու համար գացած է Աղեքսանդրիա եւ Յունաստան, եղած է Ս. Մեսսպո Մաշտոցի կրտսեր աշակերտներէն մէկը: Նշանաւոր է իր «Պատմութիւն Հայոց» գիրքով, ուր շարադրած է մեր ժողովուրդի պատմութիւնը սկիզբէն մինչեւ Արշակունեաց հարստութեան անկումը եւ Սահակ Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի վախճանումը:

Խորենացիի գիրքը գրուած է ջերմ հայրենասիրութեամբ եւ բարձր արուեստով:

Ան կը դատապարտէ դաւաճանութիւնն ու անմիաբանութիւնը եւ կը փառաբանէ մեր ժողովուրդի բարձր արժանիքները եւ հերոսութիւնը:

Խորենացիի «Պատմութիւն Հայոց» գիրքը դարեր շարունակ հայրենասիրութեան կոչ մը եղած է հայ սերունդներուն ուղղուած:



ՔԼԵՅԻ ԵՒ ԲԷԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հայկ չուգելով Բելին հնազանդանիլ, կ'երթայ Արարատի երկիրը, որ կը գտնուէր հիւսիսային կողմերը:

Բէլ իր թագաւորութիւնը բոլորին վրայ հաստատելէ յետոյ, իր զաւակներէն մէկը իր հաւատարիմ մարդոց հետ

կը դրկէ հիւսիս՝ Հայկի քով, որպէսզի ան հնազանդի իրեն եւ խաղաղութեամբ ապրի:

- Դուն ցուրտ սառնամանիքներու մէջ բնակեցար, կ'ըսէ,- սակայն տաքցո՛ւր եւ մեղմացո՛ւր քու հպարտ բնաւորութեանդ ցուրտ սառնութիւնը եւ ինձի հնազանդելով խաղաղ ապրէ, ուր որ կը փափաքիս, իմ երկրիս մէջ բնակութեան տեղ ընտրէ:

Հայկ Բելի պատգամաւորները ետ կը դարձնէ խիստ պատասխանով: Դրկուած պատգամաւորը Բաբելոն կը վերադառնայ:

Այն ատեն Բէլ զօրք կը հաւաքէ Հայկի դէմ եւ հետեւակ զօրքի մեծ բազմութեամբ կու գայ կը հասնի հիւսիս՝ Արարատի երկիրը՝ Կաղմոսի տան քով: Կաղմոս կու գայ Հայկի քով եւ այսպէս կ'ըսէ.

- Գիտցած եղիր որ Բէլը կու գայ վրադ յաւերժական քաջերով եւ հսկաներով: Եւ ես լսելով, որ ան մօտեցած է իմ տան, փախայ եւ ահա տազնապած կու գամ քու քովդ:



ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԵՍ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԹԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՒՅԵԱՆ

ՀԵՏԱԲԵՐԵՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ե՞րբ եւ որո՞նք կահոյք շինած են առաջին անգամ

Մենք կը ճաշենք սեղանի շուրջ՝ նստած աթոռի վրայ, առարկաները կը պահենք պահարանին մէջ, կը քնանանք անկողինին մէջ:

Այս բոլոր առարկաները մէկ բառով կարելի է կահոյք անուանել:

Այս իրերը շատ հին պատմութիւն ունին, Հին Եգիպտոսի մէջ 4000 տարի առաջ այդ պետութեան բնակիչները կրցած են, կահոյք պատրաստել: Այսպէս օրինակ, հին եգիպտացիներուն աթոռները եղած են երկար թիկնակներով եւ արմկակալներով՝ զարդարուած կենդանիներու փորագիր պատկերով: Աթոռակները ծալլուող ոտքերով եղած են, իսկ մահճակալները շատ ցած շրջանակներով:

Հին եգիպտացիները բարձր չէն գործածած, բարձի փոխարէն անոնք օգտագործած են ծառի կամ փողոսկրի կարծր կտորներ, որոնք գլխու տակ կը դրուէին:

ՓԱՓՈՒԿ ՓՈՔՐԻԿ ԱՐՋՈՒԿԻՆ ԾՆՈՒՆԴԸ




Համակրելի թաւիշէ արջուկները հաւանաբար ամենանշանաւոր խաղալիքներն են ոչ միայն փոքրերուն այլ նաեւ մեծերու համար:

Իսկ գիտե՞ք, որ այս զուարճալի փափուկ արջուկը յայտնուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ Թեոտոր Ռուզվելթի շնորհիւ: Այդ մէկը տեղի ունեցած է Նախորդ հարիւրամեակի սկիզբը: Օր մը երբ Նախագահը որսի գացած էր, տեսնելով վիրաւոր արջուկը կը խղճայ ու չի կրնար կրակել անոր վրայ: Թերթերը այս լուրը շատ արագ կը տարածեն եւ շուտով խաղալիքներ վաճառող խանութի մը մէջ կը յայտնուի պզտիկ ու փափուկ արջուկ մը՝ Թեոն: Այսպէս կ'անուանէին ամերիկացիները իրեն Նախագահը:



ԲԵ՛Ն, ԹԵ՛ փիւր

-այտ, -արձ, -ոյս, -այտ-որիկ, -անալի, -որորիկ, թա-անցիկ, սուր-, տա-ատ, -անակում, -ուսակեր



Կրնա՞ք ամբողջացնել բուրգը:
Փորձեցե՞ք ամբողջացնել վերի քառակուսիները: Իւրաքանչիւր քառակուսիի թիւը կը ներկայացնէ իրմէ վար գտնուող երկու քառակուսիներուն թիւերուն տարբերութիւնը:

Հարս ու փեսային այս գեղեցիկ պատկերը ներկէ՛ նախասիրած գոյներովդ:

ԿԱՆԱՐԴՈՒԱԾ ԿԱՐԱՊՆԵՐԸ

Երբ արեւուն առաջին շողերը կը յայտնուին, իշխանները կը համբուրեն իրենց մէկ հատիկ քոյրիկը ու կը պատրաստուին չուելու:

Յեղիսէ կ'աղաչէ անոնց, որ զինք ալ տանին իրենց հետ: Եղբայրները կը մերժեն:

- Երկար ճամբայ ունիք կտրելիք: Դուն ծանր ես, մենք՝ թեթեւ, ինչպէ՛ս շալկենք քեզ:

Յեղիսէն այնքա՛ն կ'աղաչէ, այնքա՛ն կ'աղաչէ, որ եղբայրները ստիպուած կը յօժարին:

Անոնք ցանց մը կը պատրաստեն, Յեղիսէն մէջը կը դնեն ու կը տանին իրենց հետ:

Վերջապէս, երկար թռչելէ ետք, կը հասնին կղզի մը ու կը գիշերեն այնտեղ:

Գիշերը Յեղիսէն տարօրինակ տեսիլք մը կ'ունենայ: Տեսիլքին մէջ կին մը կը յայտնուի իրեն ու կ'ըսէ.

- Յեղիսէ՛, եթէ կ'ուզես եղբայրներդ փրկել, անտառի փշոտ բոյսերէն թելեր պատրաստէ ու անոնցմով եղբայրներուդ համար շապիկներ հիւսէ: Այն ատեն միայն կախարդութիւնը կը վերանայ անոնց վրայէն ու անոնք կրկին կը դառնան իսկական մարդեր, պայմանով՝ որ մինչեւ գործը աւարտես՝ ոչ ոքի յայտնես գաղտնիքդ:

- Յամաձայն եմ,- կ'ըսէ Յեղիսէն:


Յաջորդ օրն իսկ Յեղիսէ կը լծուի աշխատանքի: Քարայրին շուրջ գտնուող փշոտ բոյսերէն թելեր կը պատրաստէ ու կը սկսի եղբայրներուն համար շապիկներ հիւսել: Եղբայրները ամեն անգամ որ հարցնէին իրեն՝ թէ ի՞նչ կ'ընէր, Յեղիսէ չէր պատասխաներ:

Օր մը, երբ Յեղիսէ անտառէն փշոտ բոյսեր կը հաւաքէր, երիտասարդ իշխան մը կը տեսնէ զինք ու կը փորձէ խօսիլ հետը: Յեղիսէ իշխանին հարցումներուն կը պատասխանէ ժպիտով:

Իշխանը Յեղիսէն կը տանի իր պալատը ու անոր բարի սիրտը տեսնելով՝ կ'որոշէ ամուսնանալ հետը:

(Շարունակելի)





Ուրեմն աճապարտ մտածելու թե ի՞նչ պիտի ընես:

Բէլ կը շտապէ հասնիլ Յայկի բնակութեան սահմանները:

Յայկ՝ ուշիմ եւ խոհեմ հսկան, գանգուր մագերով, վառվռուն աչքերով, աճապարանքով կը հաւաքէ իր որդիները, թոռները եւ ուրիշ քաջ եւ աղեղնաւոր մարդիկ, կ'երթայ կը հասնի ծովակի մը ափը եւ կոչ կ'ուղղէ իր զօրքին.

- Երբ մենք ելլենք Բէլի ամբոխին դէմ, աշխատինք հանդիպիլ հոն, ուր կանգնած կ'ըլլայ Բէլ՝ քաջերու խումն բազմութեան մէջ, որպէսզի կա՛մ մեռնինք եւ մեր ժողովուրդը Բէլի ծառայութեան տակ իյնայ, կա՛մ մեր մատներուն յաջողութիւնը անոր վրայ ցոյց տանք, անոր ամբոխը ցրուի, եւ մենք յաղթանակ տանինք:

Յայկ տեսնելով սաստիկ զինուած Բէլը եւ անոր աջ ու ձախ կողմերու ընտիր մարդիկը, Արամանեակը երկու եղբայրներուն հետ՝ կը կանգնեցնէ իր աջ կողմը, Կաղմոսը՝ իր միւս զաւակներուն հետ ձախ կողմը, որովհետեւ աղեղ եւ սուր գործածելու մէջ անոնք քաջ մարդիկ էին, ինքը

կը կանգնի առջեւը եւ միւս բազմութիւնը կը կանգնեցնէ իր ետեւը, կը դասաւորէ մօտաւորապէս եռանկիւն ձեւով եւ հանդարտ առաջ կը շարժի:

Երբ երկու կողմերու հսկաները իրարու մօտեցան, ահագին դողդիւն բարձրացուցին իրենց յարձակումներով եւ իրարու վրայ ահ ու սարսափ տարածեցին:

Հոն երկու կողմէն ալ, յաղթանդամ մարդիկ սուրի բերնին հանդիպելով, գետին կ'իյնային եւ կռիւը անորոշ կը մնար: Երկու կողմերն ալ անպարտելի կը մնային: Այս անսպասելի եւ անորոշ վիճակը տեսնելով՝ Բէլ վախցաւ եւ ետ քաշուելով, սկսաւ բարձրանալ այն բլուրը, ուրկէ իջեր էր, որովհետեւ կը մտածեր ամբոխին մէջ ամրանալ մինչեւ որ ամբողջ զօրքը հասնի, որպէսզի երկրորդ անգամ կռիւ մղէ: Յայկ այս բանը հասկնալով՝ առաջ կը նետուի, կը մօտենայ արքային, պինդ կը քաջէ աղեղը եւ նետը կը դպցնէ անոր կուրծքին եւ շեշտակի անցնելով անոր թիկունքին մէջէն, գետին կ'իյնայ:

Այսպէս գոռոզացած Բէլ կը կործանի, կ'իյնայ եւ շունչը կը փչէ, իսկ անոր զօրքը կը փախչի ու ցիրուցան կ'ըլլայ:

Յետոյ Յայկ ճակատամարտի տեղը շէնցնելով դաստակերտ կը դարձնէ եւ անունը կը դնէ Յարք՝ յաղթական պատերազմի պատճառով:

Այդ պատճառով այդ գաւառն ալ մինչեւ այսօր կը կոչուի Յայոց ձոր, իսկ այն բլուրը, ուր Բէլ ինկաւ իր զօրականներուն հետ, Յայկ կոչեց Գերեզմանք: Բայց Բէլի դիակը դեղերով գմռնելով Յայկ կը հրամայէ տանիլ Յարք եւ թաղել բարձրաւանդակի մը վրայ՝ ի տես իր կիներուն եւ որդիներուն, իսկ մեր աշխարհը մեր նախահօր՝ Յայկի անունով կը կոչուի Յայք:

Բառեր եւ բացատրութիւններ

Ամբոխ- խառնակ բազմութիւն

Դաստակերտ- ձեռքով շինուած, այստեղ՝ շէն, առան

Չմոսել- մարմինը հակառակիչ նիւթերով օծել՝ փտումէ գերծ պահելու համար: